

ՍԻՆՈԴԻ ՕՐԱԳՐՈՒԹԻՒՆԵՐԻՑ.

Ի 25 Սեպտեմբերի 4884 ամի. Համաժայն բարեհաճ կամաց Վեհափառ Հայրապետի Ազգիս զՍարդիս վարդապետն տէր Գասպարեանց, որ ի մի տարի եւ ինն ամսոց հիտէ ապաշխարէր յանապատճն Սևանայ, ազատ համարել յապաշխարանացն ըստ բարոյականին իսկ զբանակութիւն պարտուց նորա ի հաշիւ Աթոռապատկան կարուածոց Քիշնեւու, որ պարտաւորեան է ըստ հաշւեստումարաց ի գումարի 44.855 րուբի 65 կոպ. զրպիսի զումար ըստ զօրութեան օրինաց վճռահատեալ էր կրկնակի քանակութեամբ պահանջել ի նմանէ՝ այս էր 29.707 րուբի 50 կոպ. զարդիս ըստ համութեան Վեհափառ Հայրապետի ներեալ գլորկնակի պահանջն զմնացեալ րուն պարտուն այն է 44.855 րուբի 65 կոպէկ պատուիրել նմա՝ զի երբ ունիցի կորուութիւն հատուցանելոյ՝ տակաւ առ տակաւ հատուցէ զայն զումար պարտուցն դանձարանի Մայր Աթոռոյս եւ կարգել զնոյն Սարդիս վարդապետն տէր Գասպարեանց ի փոխանորդ վիճակին նույնույ:

Յ 50 Սեպտեմբերի 4884 ամի. Վեհափառ Հայրապետն Ազգիս ընկալեալ զմեղայակիր առ ի սրտէ զզջման եւ զերմեռանդն ապաշաւանաց Սուբրիս Եպիսկոպոսի Պարզեանց, ի շնորհ մեծի Տօնի Անուանակոչութեան իւրոյ հանեցաւ քնդ սրտառուչ ապաշտաւանս նորա եւ ներեաց նմա ըստ Քրիստոնէական պարտաւորութեան, ուստի եւ պատուիրեաց Սինօդի հրամանագրել Գերապատիւ Մակար Արքապիսկոպոսի Առաջնորդի Թեմին Ն. Կամիչեւանայ եւ Պիսարաբիոյ, զի Թոյլատրեսցէ նմա այսուհետեւ կատարել զնովեւոր պաշտօն ի Ս. Եկեղեցւոց մերում եւ յանձնեսցէ նմա զյարմարաւոր պաշտօն ի վիճակի իւրում, կամ կարգեսցէ փոխանորդ Ն. Նախիջեւանայ,

Ի 24 Հոկտեմբերի 4884 ամի. Միաբան Մայր Աթոռոյս բարթուղիմէոս վարդապետն Գէորգեան կեղծելով զանցս ինչ ի Վեհարանի, դիմեալ է յոստիկանութիւն Վաղարշապատու ամբաստանելով զումեծնէ միաբանակցէ իւրմէ, մինչ նա պարտաւոր էր դիմել առ սեպհական Գլուխ Եկեղեցւոյ իմա առ Վեհափառ Հայրապետն Ազգիս եւ ինդրել զկարեւոր տնօրէնութիւն, եթէ արդարեւ ունէր զինդիր ինչ, այլ զի առ ոյնչ համարեալ նորա զվանական կարգ եւ զկանոն եւ զեկիղեցականական պարտաւորութիւնս ըստ Եկեղեցական դասակարգութեան եւ սահմանադրութեան, մանաւանդ զիշխանութիւն եւ զիրաւասութիւն ընդհանուր Գիսոյ Եկեղեցւոյ Վեհափառ Հայրապետի Ազգիս՝ չարաչար մեղանչեալ է, ուստի Վեհափառ Հայրապետն կամելով ածել զնա յուղութիւն՝ ի զգաստութիւն եւ ի հնազանդութիւն, համեցաւ հրամայել Սինօդիս անսահման ժամանակաւ առաքել զնա ի վանս Խոր—Վիրապու յապաշխարութիւն, (որ եւ առաքեցաւ,) հրամանագրելով Վանահօր Խոր—Վիրապու վանից Պօղոս վարդապետի Մայնասեանց ունի զնա ի վանս անդ եւ հսկել ի վերայ վարուց եւ բարուց նորին, նախուզդուշագրուցանելով զնա միանգամայն, զի եթէ որ եւ իցէ եղանակաւ մեկնսցի վարդապետն այն ի վանտուց անտի, Սինօդս ունի ենթարկել զնոյն իսկ զվանահայրն խստագոյն պատժոյ ըստ օրինաց:

Ե 24 Հոկտ. 1884 ամի. Փիլիպպոս Եպիսկոպոսն հաջարեանց, որ յանցելում ամի չարաչար յուղեալ զվիճակն իւր զՏիգրանակերտ բերեալ էր ի Կ. Պօլիս, ուր եւ գժանեալ ընդ Արքեպիսկոպոս—Պատրիարքին Կ. Պօլսոյ եկեալ էր այսր ի Ս. Եջմիածին աւանց յանձնարարական կամ պաշտօնական ինչ թղթոյ, եւ զի ըստ եպիսկոպոսական ուստի պարտ է եպիսկոպոսաց գալ այսր ի Ս. Եջմիածին ի միաբառ նականական՝ յորժամ ոչ կարասցեն այլ եւս վարել զպաշտօն աւաջնորդութեան ի պիճակ իւրեանց, ըստ այսմ պատճառի եւեթ ընկալաւ զնա Վեհ. Հայրապեան ի կարդ Միաբանից Մայր Աթոռոյս. այլ չեւ եւս լրացեալ ամսոց ինչ՝ ի վերջին աւուրս Յունվար ամսոյ տարւոյս մինչ ինքնին կամէր երթալ ի Տիգրանակերտ առանց հանդիպելոյ երբէք ի Կ. Պօլիս, եւ առանց ունելոյ զգրութիւն ինչ յԱրքեպիսկոպոս-Պատրիարքէն, արգել Վեհ. Հայրապեան զդարձ նորա ի Տիգրանակերտ ընդ այլ ճանապարհ. իսկ Փիլիպպոս Եպիսկոպոս յանդզնեցաւ առանց ստանալոյ կանխաւ գհրաման եւ զթոյտութիւն մասնել ի Ներկայութիւն Վեհ. Հայրապետին հակառակ ամենայն քաղաքավարութեան եւ կարգի Վեհարանի, ուստի արտաքսեալ զատապարտեցաւ առժամանակ ինչ մնալ յարգելանս եւ զրկիլ յիկեղեցական պաշտօնավարութեանց եւ յընդառաջներյ Շորին Արքութեան. բայց եւ այնու ոչ զգաստացեալ՝ ճակառակ միաբանական եւ վանական կարգի՝ ըստ անհանդարտ բարուցն եւ բնաւորութեան իւրոյ անսանծ կրիւք եւ խոռվարարութեամբ ցարդ շարանակէ զընթացս իւր եւ ոչ զաղարի ի խոռովելոյ եւ ի զրգուելոյ ընդդէմ միմեանց եւ զՄիաբանս, ուստի Վեհափառ. Հայրապեան Ազգիս բարեհանեցաւ հրամայել Սինօդիս առժամանակեայ կերպիւ առաքել զՓիլիպպոս եպիսկոպոս ի վանս Զարեքայ անապատի, որ ի գաւառին Գանձակու:

Ե 29 Հոկտեմբերի 1884 ամի. Ֆ վաղուց անտի Բարթուլիմէոս վարդապետն միաբան Արքոյ Աթոռոյս ըմբռատ եւ չարազրդիո. բնաւորութեամբ իւրով զարձաւցեալ է առ ինքն զուշադրութիւն Վեհափառ Հայրապետի Ազգիս. Թէեւ բազմիցս ի կիր արկան մեզմ միջոցը համոզման եւ խրամուց առ ի բաց կացուցանել զնա ի վատթար ընաւորութենէն եւ ի վարուց, սակայն ի զերեւ եղին ամենայն ջանք Մայրագոյն Հոռ գեւոր իշխանութեան, եւ զողցես աննարին եղեւ ի զգաստութիւն ածել զնա. իսկ ի մօտոյ յանդզնութիւն նորա էանց բան զչափն՝ յիսորտալով անզամ ի վիրայ Անդամոց Սինօդիս. Դեռ ի 1872 ամի, մինչ սարկաւագ էր, Թոյլ ետ անմին միջամտել ի գործ վանական կառավարութեան Արքոյ Աթոռոյս եւ անմնակամ զջուրս անտառի Մայր Աթոռոյս յափշտակեալ՝ հասուցանելով վէրս ի զրուխ յայնժամեան անտառապահի, տուեալ էր եղարաց իւրոց յուռողանել զանդաստանս իւրեանց: Բայց զթացեալ Նորին Վեհափառութեան կաթուղիկոսի ամենայն Հայոց յերիտասարդական անփորձ հոսակ նորա, եւ տածելով զյոյս տակաւ ուղղութեան նորա յապազային՝ Հայրաբար ներեաց նմա յանդիմանելով եւ պատուիրելով յամենայնի կալ ի հնազանդութեան եւ ի զգաստութեան եւ ի կանոնի միաբանական կենաց: Եւ յետ ծեռնադրութեանն յաստիճան կուսակրօն բահանայութեան, եւ զինի անցանելոյ սակաւ միջոցաց, ըստ իննդրանաց Գեր. Անդրէաս Արքեպիսկոպոսի առաքեցաւ Բարթուլիմէոս վարդապետն ի դավրէժ յուստութիւն ի դպրոցին Հայոց, որ ի վարելն եւ զփոխանորդական պաշտօն ի

վիճակին Ատրպատականի ի բացակայութեան Անդրէան Արքեպիսկոպոսի ի Մայր Աթոռոցս՝ Նշանաւոր անժինք հայկազունք ի Դավթիմոյ բոլոր բարձեալ առ գեհափառ Հայրապետն Ազգիս ամբաստանեցին զբարթուղիմէոս վարդապետէ յաղացս անբարոյական զնացից նորա, զրպիսնեաց ամբաստանեալ էր արդէն բանիցս եւ ի սարկաւագութեան իւրում։ Եւ առ ի խաղաղիլ զյուզմունս Պարսկահայ մերազնեաց՝ բարեհաճեցաւ Նորին Վեհափառութիւնն հրամայել Անդրէաս Արքեպիսկոպոսի կոչել զնա այսր ի Ս. Ա. Թոռոս։ Յօրէ յայնմանէ հակառակ կուսակրօնական եւ միաբանական ուխտին յաճախեաց եւ յաւել նոր ի նորոյ ի կիրառնուլ զիւր բնածին զանապատեհ արարս ըստ վարուց եւ ընթացից իւրոց, որպէս եւ ի ներկայումս կեղծելով զանցս ինչ ի Վեհարանի՝ իւր զի մի ուն ի միաբանակցաց իւրոց սպառնացեալ իցէ կենաց նորա, եւ առ ոչինչ զրեալ զիաննական կարգ եւ գիւմոն Եկեղեցական պարտաւորութեանց եւ զիրաւունս ընդհանուր Գիլոյ Ազգիս եւ Եկեղեցոյ Հայաստանեաց՝ անմիջապէս զիմեալ է յոստիկանութիւն Վաղարշապատայ՝ ամբաստանելով զմիաբանակցէն իւրմէ, առ որ Նորին Վեհափառութիւնն կամելով վերջին անդամ ի կիրառնուլ զմիջոց ինչ յուղղութիւն նորա եւ ի զգաստութիւնն հրամայեաց Սինօդիս առաքել զնա ի վանս Խոր - վիրապու յապաշխարութիւնանաման ժամանակաւ։ Վասնորոյ Սինօդս ի 21 ներկայ ամսոյս օրազրեաց եւ տնօրինեաց՝ յիտ ի ժողով գումարելոյ զմիաբանս Սրբոյ Ա. Թոռոյս կոչել զբարթուղիմէոս վարդապետն յԱշեան Սինօդիս վասն յայտնելոյ նմա զհրաման Նորին Վեհափառութեան, սակայն յիտ երիցս հրաւիրման միջոցաւ Բարե. Գարեղին վարդապետի Սաթունեանց Անդամոյ վանդական կառավարութեան եւ Շաթիր Յարութիւնի Մարգարեան՝ զանազան պատճառաբանութեամբ բացէ ի բաց հրաժարեցաւ իսպառ բարթուղիմէոս վարդապետն յանդիման լինել յատենի, յաւելով բանս անպատշաճս՝ առանց զիտելոյ Թէ՝ առ ինչ կոչին ի Սինօդս. ուստի ընթերցեալ զօրադրութիւն Սինօդիս ի լուր Միարանից, ապա հրամայեցաւ Անզամոց Վանրական Կառավարութեան առաքել զբարթուղիմէոս վարդապետն ի տեղի ապաշխարութեան բայց նա կրկին անսաստեալ հրամանի Խշխանութեան խոյս տուեալ է ի սենեկէ իւրմէ եւ նախ ի բնակութիւն Կիւրեղ վարդապետի եւ ապա առ Երեմիա Եպիսկոպոսն փութացեալ է եւ հակառակ կացեալ է երիցս հրաւիրման եւ աղդարարութեան Անդամոյ վանդական Կառավարութեան, եւ հուսկ յետոյ ի ծեռքակալին զնա սուրհանզակաց Մայր Ա. Թոռոյս՝ յանդնեալ է նա ի պայքար մտանել եւ նախայարձակ լիալ ջանացեալ է բռնցել եւ աստակել զսուրհանդակաւ։ Ուստի ի զիւրուցանելն զայտն ամենայնէ՝ Նորին Վեհափառութիւն յաւել հրամայել Սինօդիս ի ծեռն Վանահօր Խոր - վիրապու առնուլ ի Բարթուղիմէոս Վարդապետէ զիւրակ, զիիլոն եւ զվարդապետական խաչն ականակրու ընդ վկայական կոնդակին Հայրապետականի եւ բերել այսր ի Սինօդա, (որ եւ ածեալ եղեւ ի կատար)։

Ե ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՅ ԿԱԹՈՒՂԻԿԵ ԷՉՄԻԱՅՆԻ Ի ՎԱՂԱՐՃԱՊԱՏ.